ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ 2012

Փոքր բիզնեսի ակտի իրականացման առաջընթաց

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

OECD

European Commission

ETF Working together Learning for life

European Bank for Reconstruction and Development

Սույն հետազոտությունն իրականացվել է Եվրոպական Միության կողմից 2009թ. մայիսին նախաձեռնված Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում:

Վերջինիս նպատակն է ստեղծել պայմաններ խթանելու ԵՄ և Արևելյան գործընկեր վեց երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) միջև քաղաքական միավորմանը և տնտեսական ինտեգրման խորացմանը:

Բովանդակություն.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ 2012	4
ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՓԲԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ	6
ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ	22



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արևելյան գործընկեր» (ԱԳ) երկրները (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) ներկայացնում են ռազմավարական տեղադրությամբ կարևոր տնտեսական տարածաշրջան, որտեղ ՀՆԱ-ի միջին աճը 2010թ. կազմել է 5.4%: Տարածաշրջանի բոլոր երկրներում փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են տնտեսական աճի և զարգացման հիմնական շարժիչ ուժերը: Այնուամենայնիվ, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի և բիզնեսի վարման ստեղծված անբարենպաստ պայմանների արդյունքում ՓՄՁ-ն այս տարածաշրջանում ապահովում է աշխատատեղերի 50%-ը միայն (այս ցուցանիշը ՏՀԶԿ երկրներում կազմում է 60-70%) և համախառն ավելացված արժեքի 30%-ը (55%՝ ՏՀԶԿ երկրներում):

2012թ. ՓՄՁ քաղաքականության համաթիվը քաղաքականություն մշակողների համար գործիք է, որը կոչված է բացահայտելու ՓՄՁ-ի իրական ներուժն աշխատատեղերի ստեղծման և տնտեսական աճին նպաստման գործում: Համաթիվը կառուցվում է քաղաքականության 92 ցուցանիշների հիման վրա և ներկայացնում է Փոքր բիզնեսի ակտի (ՓԲԱ, Small Business Act for Europe) 10 սկզբունքների համաձայն ՓՄՁ ազգային քաղաքականությունների գնահատման հայեցակարգ: Համաթիվը բացահայտում է ուժեղ և թույլ կողմերը քաղաքականության մշակման և իրականացման ասպարեզում և յուրաքանչյուր երկրի համար առաջադրում է առաջնահերթ բարեփոխումների ցանկ:

Այն կառուցված է 2006թ., 2009թ. և 2012թ. արևմտյան բալկանյան երկրներում կիրառած օրինակների և «MEDA» տարածաշրջանի (ԵՄ-ի հարավային հարևանություն) 2008թ. գնահատման հիման վրա:

ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԹԻՎ.

Տարածաշրջանում գրանցվել է առաջընթաց մասնավոր ոլորտի և ՓՄՁ-ի համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու գործում, թեև առկա են որոշակի մարտահրավերներ.

Բարելավվել է բիզնես միջավայրը:

- Ընկերությունների գրանցման գործընթացների բարեփոխումները նվազեցրել են կարգավորումների ավելորդ բեռը:
- Օրենսդրական բարելավումները նվազեցրել են ՓՄՁ-ի համար վարչական և օրենսդրական արգելքները:
- Բոլոր ԱԳ երկրներն սկսել են իրականացնել իրավական և կարգավորումների դաշտի բարեփոխումներ՝ դրանով իսկ ընդլայնելով ֆինանսական ոլորտը՝ ի հավելումն գործող բանկային վարկավորման, որը ներկայումս ՓՄՁ-ի արտաքին ֆինանսավորման հիմնական աղբյուրն է:

Ամրապնդվել է ՓՄՁ զարգացման <u>ինստիտուցիոնալ</u> հենքը:

- Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան առաջընթաց են գրանցել հանրային-մասնավոր երկխոսությունների և միջգերատեսչական համակարգման միջոցով հատկապես ՓՄՁ-ին ուղղված քաղաքականությունների և ինստիտուտների զարգացման ասպարեզում:
- Ադրբեջանը, Բելառուսը և Ուկրաինան սկսել են աջակցության մեխանիզմներ կիրառել փոքր բիզնեսի ոլորտում: Վերջիններս, այնուամենայնիվ, դեռևս բարելավվելու տեղ ունեն՝ ի հաշիվ միջգերատեսչական համագործակցության:

Այնուամենայնիվ, դեռևս առկա է նպատակային քաղաքականությունների անհրաժեշտություն ուղղված ՓՄՁ-ի համար ֆինանսավորման հասանելիության ապահովմանը և ձեռներեցության խթանմանը:

- Չնայած նրան, որ ֆինանսավորման հասանելիության ապահովման բնագավառում առկա են մի շարք հաջողված փորձեր (օրինակ՝ վարկային երաշխիքների համակարգեր, միկրոֆինանսավորում, մասնավոր ռիսկային կապիտալ), այնուամենայնիվ բացակայում են արդյունավետ քաղաքականությունները:
- Երկրները պետք է խթանեն ձեռնարկատիրական մտածելակերպը և զարգացնեն ձեռնարկատիրական հմտությունների արդյունավետ քաղաքականություններ՝ հիմնվելով պոտենցիալ գործարար առաջնորդների վերապատրաստման կարիքների վրա: Ձեռնարկատիրական ներուժի զարգացմանը կնպաստեն նաև կանանց ձեռներեցության խթանմանն ուղղված մեխանիզմները:

ՓՄՁ-ի վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս սակավ է:

- Առավել արդյունավետ քաղաքականություններ մշակելու և քաղաքականության գործիքների մոնիտորինգի և գնահատմանհամակարգի բարելավման համար կառավարություններին անհրաժեշտ է թարմ, ճշգրիտ և համակողմանի տեղեկատվություն:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐ 2012

Տարածաշրջանում ձեռնարկատիրական գործունեության ողջ պոտենցիալն օգտագործելու համար կառավարությունները պետք է:

Առավել սերտորեն համագործակցեն մասնավոր հատվածի հետ՝ ապահովելու բարեփոխումների համապատասխանությունը շուկայի ընթացիկ պահանջներին:

- Պատմականորեն գտնվելով քաղաքականության մշակման գործընթացից դուրս՝ Արևելյան Գործընկեր երկրներում մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, հատկապես ՓՄՁ միություններին, անհրաժեշտ է ներգրավել քաղաքականության քննարկման բոլոր փուլերում՝ բարձրացնելով քաղաքականությունների շուկայի արագ փոփոխվող կարիքներին արձագանքելու կարողությունը: Գործարար համայնքի ներգրավումը նաև կապահովի բարեփոխումների առավել արդյունավետ իրականացումը:

Բարելավել պետական գործակալությունների միջև համակարգումը:

- ՓՄՁ զարգացմանը խթանող զանազան գործակալությունների առավել արդյունավետ համակարգումը կնպաստի խուսափել կրկնօրինակումներից, ապահովել ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում և բարձրացնել քաղաքականության ազդեցությունը: Դա կարող է իրականացվել՝ ձևավորելով համապարփակ ՓՄՁ զարգացման ռազմավարություն՝ հստակ և չափելի նպատակների սահմանմամբ:

Ձևավորել ՓՄՁ քաղաքականության նպատակային գործիքներ:

- Ձևավորել քաղաքականության գործիքներ՝ խթանելու ՓՄՁ զարգացումը, ներդրումները, նորարարությունը և արտահանման կարողությունները տնտեսության այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները, զբոսաշրջությունը և շինարարությունը: Նման գործիքները հատկապես էական են՝ ֆինանսավորման հասանելիության, ձեռնարկատիրական հմտությունների, նորարարության, բիզնես աջակցման ծառայությունների և արտահանման խթանման բարելավման գործում:

Առավել մանրամասն տվյալների հավաքագրում առավել արդյունավետ քաղաքականության համար:

- Հավաքագրել առավել մանրամասն կառուցվածքային վիճակագրական տվյալներ՝ մշտապես դիտանցելու և գնահատելու հանրային քաղաքականության գործիքները, և գնահատել ՓՄՁ ոլորտի կատարողականը ինչպես ազգային, այնպես էլ ոլորտային մակարդակում:

ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՓԲԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

«Եվրոպական փոքր բիզնեսի ակտի» 10 ուղղությունները

1 ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ և ԿԱՆԱՆՑ ԶԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ

2 ՍՆԱՆԿԱՑՈՒՄԸ և ԵՐԿՐՈՐԴ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3 ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏ

4 ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

5ա ՓՄՁ-ՆԵՐԻ և ՍԿՍՆԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

5բ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ

6 ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

7 ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

8ա ԶԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8բ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9 ՓՄՁ-ՆԵՐԸ «ԿԱՆԱՉ» ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

10 ՓՄՁ-ՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՑՆԱՑՈՒՄ

Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն

Ինչպե՞ս են կառավարությունները համագործակցում ուսումնական համակարգում ձեռներեցության խթանման համար: Ինչպե՞ս է հաջողված փորձը փոխանցվում կրթական և վերապատրաստման համակարգում: *Ի՞նչ մեխանիզմներ են գործում կանանց ձեռներեցությունը խթանելու համար:*

ԱԳ երկրներից շատերը կրթական համակարգում ձեռներեցության խթանման համար արդեն հաստատել են բազմակի շահագրգիռ կողմերի միջև երկխոսության համակարգ, սակայն համագործակցության կառուցման գործընթացը և ներգրավված առաջնորդական կարողությունները պետք է բարելավվեն: Կազմակերպված գործընկերային ցանցերը և հաջողված փորձի փոխանակումը ձեռներեցական ուսումնառության բնագավառում բավականին թույլ են զարգացած:

ԱԳ երկրները բավականին հաջող նախաձեռնություններ են իրականացրել ավագ դպրոցների համակարգում ձեռներեցության խթանման ասպարեզում:

Բոլոր երկրները մի շարք քայլեր են իրականացրել կանանց ձեռներեցությունը խթանելու ուղղությամբ՝ հիմք ստեղծելով հետագայում ներգրավվածության աստիճանի բարձրացման համար:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական ծրագրերի բարեփոխման և ուսուցիչների վերապատրաստման միջոցով իրականացնել տարածաշրջանային մակարդակով համատեղ աշխատանք ձեռներեցությունը որպես առանցքային ունակություն զարգացնելու ուղղությամբ: Ապահովել ձեռներեցության սիստեմատիկ ներառումը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության և վերապատրաստման համակարգում:

Խորհրդատվական ցանցերի զարգացման, վերապատրաստման և ուղղորդման ծառայությունների տրամադրման և ֆինանսավորման հասանելիության բարելավման միջոցով խթանել կանանց ձեռներեցությունը:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1՝ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

Սնանկացումը և երկրորդ հնարավորությունը

Արդյո՞ք սնանկացման գործընթացները և կարգավորումները պատշաճ են գործում: Արդյո՞ք դրանք խթանում են բիզնեսի ելքը և մուտքը շուկա: Ի՞նչ հետաձգումներ և ծախսեր են առկա այս գործընթացներում:

Բոլոր ԱԳ երկրները ունեն կարգավորումներ սնանկ ընկերությունների, սնանկության և սնանկացման գործընթացների համար, սակայն վերջիններիս կատարելագործվածության աստիճանը տարբերվում է մի երկրից մյուսը: Մասնավորապես, միջազգային ստանդարտներին համապատասխանեցման համար բարելավումների կարիք ունեն սնանկացման գործի վարույթ ընդունելու դրույթները, մինչսնանկացման գործարքների և վերակազմակերպման գործընթացներին վերաբերող կարգավորումները և օրենքները:

- Սնանկացման գործընթացները համեմատաբար կարգավորված են Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Մոլդովայում:
- Բելառուսի Հանրապետությունում դատական գործընթացները տևում են չափազանց երկար՝ 5.8 տարի միջինում:
- Ուկրաինայում գործընթացները բավականին թանկ են միջինում սեփականության արժեքի 42%:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարածաշրջանի երկրներում սնանկացման գործընթացում ժամկետների կրճատում: Սա դրական ազդեցություն կունենա նաև գործընթացների ծախսերի և վերականգնման մակարդակի վրա:

Ապահովել սնանկացման գործերի վարումը մասնագիտացած դատարանների կողմից և ներգրավված դատավորների ու այլ պատասխանատու անձանց պատշաճ վերապատրաստումը:

Ֆորմալ կարգավորման ենթարկել արտադատարանային կարգավորումները՝ սնանկացման գործընթացի կառավարման ծախսերի արդյունավետությունն ապահովելու համար:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2՝ ՍՆԱՆԿԱՑՈՒՄԸ և ԵՐԿՐՈՐԴ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ

Որքանո՞վ է ՓՄՁ քաղաքականության մշակման ինստիտուցիոնալ դաշտը կատարելագործված: Արդյո՞ք կառավարություններն իրականացնում են օրենսդրական բարեփոխումներ: Արդյո՞ք հանրային-մասնավոր խորհրդատվությունները համապարփակ են և արդյունավետ:

Բոլոր ԱԳ երկրներում ՓՄՁ քաղաքականության մշակման և հանրային-մասնավոր խորհրդատվությունների մեխանիզմները դեռևս զարգացման նախնական փուլում են:

- Հայաստանում և Մոլդովայում կայացած են ՓՄՁ քաղաքականության հիմնաքարերը, ներառյալ ՓՄՁ քաղաքականության իրականացման գործակալությունը և ՓՄՁ զարգացման ռազմավարությունը (մշակման մեջ):
- Վրաստանը զգալի ձեռքբերումներ է գրանցել՝ բիզնես միջավայրի զարգացման համար կիրարկելով հորիզոնական մոտեցում, որը ենթադրում է մասնավոր հատվածի հետ արդյունավետ համագործակցության և միջգերատեսչական գործուն մեխանիզմների առկայություն:
- Ուկրաինայում ՓՄՁ քաղաքականության համար պատասխանատու գործակալությունը վերակազմավորման գործընթացից հետո վերագործարկվեց, սակայն դրա արդյունավետությունը կախված կլինի վերջինիս լիազորություններից և ֆինանսավորումից, որոնք դեռևս պետք է հստակեցվեն:
- Ադրբեջանում և Բելառուսում ՓՄՁ քաղաքականության իրականացումը կենտրոնացված չէ մեկ կառույցի ներքո, մասնավոր հատվածի հետ պաշտոնական խորհրդատվությունները սահմանափակ բնույթ են կրում և դրանց մեջ ՓՄՁ միությունների ներգրավվածությունը ցածր է:

Բոլոր ԱԳ երկրները իրականացրել են օրենսդրական բեռի թեթևացման բարեփոխումներ: Հայաստանում և Մոլդովայում իրականացվել է Կարգավորման ազդեցության գնահատում (ԿԱԳ):

Փոքր բիզնեսի ոլորտը նկարագրող միջազգայնորեն համադրելի և թարմ վիճակագրական տվյալների սահմանափակությունը քաղաքականության մշակման արդյունավետության բարձրացման հիմնական խոչընդոտներից է բոլոր ԱԳ երկրներում:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3՝ ՓՄՁ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ինստիտուցիոնալ դաշտի արդյունավետության բարձրացման համար ֆինանսավորման և ռազմավարական նշանակության մեծացում: Հետագա կարևորագույն քայլերից է պարբերական խորհրդատվությունների և ԿԱԳ, ինչպես նաև ՓՄՁ խթանման առկա ծրագրերի մոնիտորինգի և գնահատման միջոցով առկա կառույցների ուժեղացումը և քաղաքականության մշակման գործընթացի բարելավումը:

Ադրբեջանում, Բելառուսում և Ուկրաինայում ՓՄՁ քաղաքականության մշակման պատասխանատու ինստիտուտների ուժեղացում ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման և հանրային-մասնավոր երկխոսության խթանման համար: Քաղաքականության մշակման վաղ փուլում ՓՄՁ-ների ներգրավումը և թափանցիկ ու համապարփակ ՓՄՁ միությունների զարգացման խթանումը կօգնի ՓՄՁ կարիքներին առավելապես համապատասխանող քաղաքականությունների մշակմանը:

Բոլոր ԱԳ երկրներում քաղաքականության մշակման համար վկայությունների հիմքի ստեղծման համար որակական և թարմ վիճակագրական տվյալների հավաքագրում և տարածում:

ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր

Արդյո՞ք ծախսերը կրճատելու և գործընթացները թեթևացնելու համար կարգավորումները պարզեցվել են: Արդյո՞ք ԱԳ երկրների կառավարություններն օգտվում են էլեկտրոնային կառավարման գործիքների առավելություններից:

Ընկերությունների գրանցման գործընթացների կարգավորման միջոցով բոլոր երկրները մեծ առաջընթաց են գրանցել ՓՄՁ գործառնական միջավայրի բարեփոխումների հարցում... Ընկերությունների գրանցման ասպարեզում բարեփոխումները նպաստել են ավելորդ բեռ հանդիսացող կարգավորումների վերացմանը, ինչպես նաև ՓՄՁ-ների և ձեռներեցների համար ժամանակի խնայմանը և ծախսերի կրճատմանը:

...սակայն անհրաժեշտ են հետագա բարեփոխումներ: Ադրբեջանում, Մոլդովայում և Ուկրաինայում «մեկ-պատուհան» սկզբունքը ներկայումս թույլ չի տալիս մեկ տեղում իրականացնել բոլոր անհրաժեշտ նախապատրաստական և հաջորդող գործընթացները: Ուկրաինայում գրանցման ամբողջական գործընթացը կարող է տևել մինչև 24 օր:

Որոշ երկրներ վերակառուցել են անարդյունավետ ինստիտուտները՝ այդպիսով ամբողջովին վերափոխելով գրանցման գործընթացը: Վրաստանում մեծ թվով հանրային ծառայությունների տրամադրումը կենտրոնացված է մեկ վայրում (Հանրային ծառայությունների սրահներ), որը մեծացնում է ՓՄՁ-ների համար դրանց հասանելիությունը և նվազեցնում վարչարարության բեռը:

Բոլոր ԱԳ երկրներն ստեղծում են էլեկտրոնային կառավարման ծառայությունների մեծ շրջանակ. էլեկտրոնային հարկային հաշվետվությունները սովորաբար այս գործընթացի սկզբնակետն են: Երկրներում էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքի բարելավմանն է նպաստել նաև էլեկտրոնային ստորագրությունների համակարգը:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԳ տարածաշրջանում շարունակել ընկերությունների գրանցման բնագավառում բարեփոխումների գործընթացը՝ հատկապես շեշտադրելով առաջավոր գործիքների օգտագործումը, ինչպիսիք են առցանց գրանցումը և «մեկ պատուհան» սկզբունքի արդյունավետության բարձրացումը:

Զարգացնել էլեկտրոնային կառավարման գործառնական ծառայությունների առավել լայն շրջանակ, ինչպիսիք են սոցիալական ապահովման, կենսաթոշակային հատկացումները, գնումների և կադաստրի հետ կապված գործառնությունները:

Էլեկտրոնային կառավարման համակարգի համար ապահովել առավել արդյունավետ և ժամանակակից ենթակառուցվածք՝ հանրային կառավարման մարմինների տվյալների բազաների միջև կապ ապահովելու միջոցով:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4՝ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ

Ի՞նչ աջակցության ծառայություններ են առկա ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար: Արդյո՞ք ԱԳ երկրների կառավարությունները բացահայտում և հասցեագրում են բիզնես ծառայությունների շուկայի բացերը:

Չնայած ՓՄՁ-ների համար մասնավոր բիզնես ծառայությունների ոլորտը սահմանափակ է, բոլոր ԱԳ երկրներում բավականին ակտիվ են ՓՄՁ աջակցության դոնորային ֆինանսավորման ծրագրերը:

ՓՄՁ և սկսնակ ընկերությունների աջակցության սկզբունքները բխում են ՓՄՁ կամ զարգացման ազգային ռազմավարություններից բոլոր ԱԳ երկրներում: Հայաստանում և Մոլդովայում ՓՄՁ աջակցության ծառայությունները տրամադրվում են ՓՄՁ աջակցության ազգային գործակալությունների կողմից:

- Ադրբեջանում աջակցության ծառայությունները ներկայումս տրամադրում է ազգային վերապատրաստման կենտրոնը:
- Վրաստանը և Ուկրաինան սկսնակ ընկերությունների համար խորհրդատվական և ֆինանսական աջակցություն ապահովում են հանրային ֆինանսավորման մեխանիզմների միջոցով:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեղծել մեխանիզմներ ՓՄՁ աջակցության նախաձեռնությունների գնահատման համար:

Մեծացնել բիզնես տեղեկատվության հասանելիությունը: Ադրբեջանում, Վրաստանում և Ուկրաինայում տեղեկատվության բացը լրացնելու համար անհրաժեշտ կլինի մեկ միասնական պորտալ, որը կընդգրկի ՓՄՁ-ի հետ առնչվող թեմաների ընդգրկուն շրջանակ:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5Ա՝ ՓՄՁ-ՆԵՐԻ և ՍԿՍՆԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

Պետական գնումներ

Ի՞նչ մեխանիզմներ են գործում պետական գնումների համակարգում ՓՄՁ-ների մասնակցությունն ապահովելու համար:

Բոլոր երկրները զգալի առաջընթաց են գրանցել պետական գնումների մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելու գործում:

- ԱԳ երկրներից ոչ մեկում չի գործում ուշացված վճարումները կարգավորող համակողմանի հայեցակարգ:
- Բելառուսը լավագույն փորձն ունի մրցույթները առանձին մասերի բաժանելու և ՓՄՁ-ների համար համաչափ որակական և ֆինանսական պահանջներ մշակելու մեջ:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական գնումների գործընթացում թափանցիկություն ապահովելու և խտրականությունը բացառելու նպատակով մոտենալ ԵՄ պետական գնումների ստանդարտներին:

Մրցույթներին մասնակցության համար ՓՄՁ-ների հնարավորությունը մեծացնելու նպատակով պարզեցնել մասնակցության գործընթացները և պահանջները:

Մրցակցությունը խթանելու համար թույլ տալ մրցույթներին արտասահմանյան ընկերությունների մասնակցությունը:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5Բ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն

Որո՞նք են ԱԳ երկրներում ՓՄՁ-ների արտաքին ֆինանսավորման աղբյուրները: Արդյո՞ք իրավական և բիզնես միջավայրը նպաստում է առևտրային գործարքներում վճարումների ժամանակին կատարմանը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամերը բացասական ազդեցություն ունեցան բանկային վարկավորման վրա, որը սակայն դեռևս մնում է ֆինանսավորման հիմնական աղբյուրը: Բանկերը բավականին զգուշավոր են ռիսկային գործարքների նկատմամբ, մինչդեռ ֆինանսավորման այլ աղբյուրները, ինչպիսիք են լիզինգը, դեռևս զարգացման կարիք ունեն:

Մասնավոր կապիտալը սահմանափակ է, բաժնեմասային ֆինանսավորման շուկաները փոքր են և ունեն ցածր իրացվելիության մակարդակ:

ՓՄՁ-ների պետական աջակցությունը թույլ է զարգացած և երկրների մեծ մասում կարգավորվում է ֆիսկալ գործիքներով միայն (բացառությամբ Ադրբեջանի):

Իրավական և կարգավորումների դաշտի զարգացումը տարբեր ընթացք ունի տարածաշրջանի երկրներում:

- Վարկառուների իրավունքների պաշտպանությունը դեռևս բավականին թույլ է ԱԳ երկրներում:
- Կադաստրի և վարկային տեղեկատվական համակարգերը զարգացած են Հայաստանում և Վրաստանում: Գրավների միասնական ռեգիստր գործում է Վրաստանում և Մոլդովայում:

Ֆինանսական գրագիտությունը բավականին ցածր է տարածաշրջանում, սակայն երկրների կառավարությունները լավատեղյակ են խնդրի վերաբերյալ:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6՝ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ՓԲԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6.

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խթանել մրցակցությունը բանկային ոլորտում և աջակցություն տրամադրել բանկերին ՓՄՁ կարիքներին համապատասխանող նպատակաուղղված ֆինանսական գործիքների ստեղծման համար:

Ներդրումային հնարավորությունների մեծացման և տարածաշրջան մասնավոր բաժնեմասային կապիտալի ներգրավման համար նպատակադրել բիզնես միջավայրի և կորպորատիվ կառավարման ստանդարտների բարելավումը:

- Ստեղծել տեղական ինստիտուցիոնալ ներդրողների բազա (օրինակ՝ ապահովագրական և կենսաթոշակային ոլորտների բարեփոխումների միջոցով) ելքի (exit) հնարավորություններ՝ բաժնեմասային կապիտալի շուկայի զարգացման համար:

- Պետական ֆինանսական աջակցության արդյունավետության բարձրացման համար կրճատել վարչարարական գործընթացները և կարգավորումները:

Շարունակել իրավական և կարգավորումների դաշտի բարելավումը

- Հայաստանում, Ադրբեջանում և Բելառուսում ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիությունը մեծացնելու նպատակով ստեղծել արդյունավետ և հասանելի գրավի կենտրոնական ռեգիստր:

- Տեղեկատվության հասանելիությունն ապահովելու և տեղեկատվական ասիմետրիան վերացնելու նպատակով ստեղծել մասնավոր վարկային բյուրո Ադրբեջանում և Բելառուսում:

- Ուժեղացնել տարածաշրջանում վարկառուների իրավունքների պաշտպանության իրավական դաշտը՝ գրավի վերադարձման գործընթացում համապատասխան կիրարկման մեխանիզմների ապահովման միջոցով:

Բարձրացնել ֆինանսական խնդիրների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը և գիտելիքների մակարդակը:

Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ

Արդյո՞ք ԱԳ երկրները կրճատում են արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների առևտրի տեխնիկական խոչընդոտները՝ ԱԳ առևտրային օրակարգին ընդառաջ:

Ուկրաինան և Բելառուսը ԱԳ տարածաշրջանում լավագույնս են հասցեագրում արդյունաբերական ապրանքների համար առևտրային խոչընդոտները և խնդիրները:

- Ուկրաինան ավարտին է հասցրել բանակցությունները ԵՄ-ի հետ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու՝ ԽՀԱԱՀ (DCFTA) շրջանակներում, որը ենթադրում է առևտրի ոլորտում օրենսդրության զգալի մոտարկում:
- Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան հետևում են Ուկրաինայի օրինակին և սկսել են ԵՄ-ի հետ ԽՀԱԱՀ շրջանակներում բանակցությունները:
- Ադրբեջանը միակ ԱԳ երկիրն է, որը ԵՄ օրենսդրությանը մոտարկման բնագավառում դեռևս առաջընթաց չի գրանցել:
- Բելառուսը Ռուսաստանի և Ղազախստանի հետ մաքսային միության միջոցով մոտարկել է սանիտարական և ֆիտոսանիտարական ենթակառուցվածքը:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԳ բոլոր երկրներում (բացառությամբ Մոլդովայի) շարունակել վարչական և կարգավորման ոլորտի վերաբերյալ տեղեկատվական բազայի բարելավումը բիզնես համայնքի, մասնավորապես, ՓՄՁ-ների համար: Բարելավման առաջնահերթ ոլորտն է ԵՄ իրավական դաշտի հետ մոտարկման վերաբերյալ տեղեկատվությունը:

ԵՄ և ԱԳ երկրների միջև առևտրի խթանման և ԱԳ երկրների համար ԵՄ շուկա մուտքի հեշտացման համար ապահովել ԵՄ իրավաօրենսդրական դաշտի հետ մոտարկումը կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 7՝ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

Ձեռներեցության հմտություններ

Արդյո՞ք ՓՄՁ-ներին տրամադրվում են որակյալ վերապատրաստման և խորհրդատվական ծառայություններ: Ինչպե՞ս են երկրներում գնահատվում վերապատրաստման և ուսումնառության արդյունքները:

Բոլոր ԱԳ երկրները քաղաքային և գյուղական կենտրոնների միջոցով ՓՄՁ-ներին վերապատրաստման ծառայություններ տրամադրելու համար մշակել են քաղաքականություններ և հատկացրել ռեսուրսներ, ներառյալ առցանց գործիքները: Տարածաշրջանում դեռևս հասանելի չեն հատուկ խմբերին (ինչպիսիք են երիտասարդ ձեռնեռեցները, կանայք և արագ աճող ձեռնարկությունները) հասցեագրող քաղաքականությունները և մեխանիզմները:

Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Մոլդովան պարբերական կարգով գնահատման են ենթարկում ՓՄՁ-ների կարիքները վերապատրաստման բնագավառում, սակայն նման նախաձեռնությունները հիմնականում իրականացվում են ոչ պարբերաբար վերապատրաստման ծառայություններ տրամադրողների և գործատուների անհատական ջանքերով:

Երկրներից ոչ մեկում չի գործում որակի ապահովման ազգային ենթակառուցվածք՝ վերապատրաստման որակի կամ ուսումնառության արդյունքների գնահատման կամ վերապատրաստման դասընթացների միջազգային հավատարմագրման համար:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓՄՁ հմտությունների զարգացման բնագավառում քաղաքականության բարելավման և ռեսուրսների բաշխման օպտիմիզացման նպատակով վերապատրաստման կարիքների վերաբերյալ տեղեկատվության պարբերական հավաքագրում:

Մշակել որակի վերահսկման, ինստիտուցիոնալ աջակցության և նպատակաուղղված մեխանիզմներ սկսնակ ընկերությունների և արագ աճող ձեռնարկությունների համար:

Բիզնես համայնքի և կառավարության համաձայնությամբ ընտրված չափանիշների օգնությամբ ապահովել վերապատրաստման, խորհրդատվության և ֆինանսական աջակցության մեխանիզմների միջև կապերը:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 8ա՝ ՁԵՌՆԵՐԵԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն

Արդյո՞ք նորարարությունների քաղաքականությունը հետևողական է և ունի ռազմավարական նշանակություն ՓՄՁ աճին նպաստելու գործում: Քաղաքականության ի՞նչ գործիքներ են կիրարկվում ՓՄՁ-ներին տեխնոլոգիաների փոխանցումն ապահովելու համար:

Նորարարությունը և տեխնոլոգիաների փոխանցումը սահմանափակված են պետական «վերից վար» միջամտություններով, ֆինանսավորման ոչ թափանցիկ որոշումներով և Հումի կառույցների ժառանգությամբ, որոնք շարունակում են գործել մասնավոր ոլորտից մեկուսացած:

- Բելառուսը և Ուկրաինան ստեղծել են նորարարությունների համակողմանի ռազմավարության մշակման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառույցները և փաստաթղթային հիմքը:
- Նորարարության քաղաքականության մեխանիզմները և ծրագրերը հաճախ մնում են թղթի վրա և չեն ֆինանսավորվում:
- Նորարարության և Հումի պետական խթանման հիմնական շահառուներն են մնում պետական ձեռնարկությունները:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորարարության քաղաքականության համար ռազմավարական մոտեցում որդեգրել, որը կներառի տնտեսության տարբեր ճյուղերում արագ աճող ձեռնարկությունների և նորարար ՓՄՁ-ների աջակցությանն ուղղված ակտիվ մեխանիզմներ: Նորարարությունը պետք է հանդիսանա մի շարք քաղաքականությունների և ռազմավարությունների առանցքը:

Մշակել ՓՄՁ-ների կլանման (absorptive) և նորարարական կարողությունների մեծացման համար կրթության և հետազոտությունների բնագավառում խթանների մեխանիզմ:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 8բ՝ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ

Արդյո՞ք ՓՄՁ-ները տեղեկացված են «կանաչ» աճի հնարավորությունների վերաբերյալ: Ինչպե՞ս են կառավարությունները խթանում էկո-նորարարությունները և էկո-*արդյունավետ բիզնես մոդելները:*

ԱԳ տարածաշրջանում երկրների մեծ մասը ներկայումս տեղյակ են էկոլոգիական խնդիրներից և դրանց հնարավոր տնտեսական ազդեցությունից: Որոշ երկրներում ՓՄՁ քաղաքականության մեջ ներառված են «կանաչ» աճի սկզբունքները, և ընկերությունները սերտիֆիկացվում են ըստ շրջակա միջավայրի կառավարման ստանդարտների (EMS):

Կառավարությունները հիմնականում խրախուսում են բիզնես համայնքին հաշվի առնել շրջակա միջավայրի խնդիրները, սակայն որևէ ԱԳ երկրում առկա չէ նպատակաուղղված ֆինանսավորում այն ՓՄՁ-ների համար, որոնք խթանում են էկո-արդյունավետ բիզնեսի և «կանաչ» տնտեսության զարգացմանը:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքականության օրակարգում առավել մեծ դեր տալ «կանաչ» աճի սկզբունքին՝ ներառելով «կանաչ» տնտեսության սկզբունքները շրջակա միջավայրի կառավարման ծրագրերի և ռազմավարությունների մեջ և դրանով իսկ խթանելով էկո-արդյունավետ բիզնեսի մեջ ՓՄՁ ներդրումները և նպաստելով շրջակա միջավայրին առնչվող նորարարություններին:

«Կանաչ» աճի և շրջակա միջավայրի կառավարման ծրագրի իրականացման օգուտների վերաբերյալ ՓՄՁ տեղեկացվածության բարձրացման համար տրամադրել առավել համապարփակ տեղեկատվություն և կիսվել փորձառությամբ:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 9՝ ՓՄՁ-ՆԵՐԸ «ԿԱՆԱՉ» ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ՓՄՁ-ների միջազգայնացում

Որքանո՞վ են կառավարությունները նպաստում արտահանմանը միտված ՓՄՁ-ների՝ միջազգային շուկաներ մուտքին:

Բոլոր ԱԳ երկրները իրականացնում են արտահանման խրախուսման ծրագրեր, որոնք սակայն չունեն ՓՄՁ-ին նպատակաուղղված հատուկ գործիքներ:

- Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Մոլդովայում գործում են արտահանող ընկերությունների խթանմանն ուղղված հատուկ գործակալություններ: Այնուամենայնիվ, սահմանափակ աջակցություն է տրամադրվում արտահանող ՓՄՁ- ներին:

- Ոչ Բելառուսը, ոչ Ուկրաինան չունեն մասնագիտացած գործակալություններ, սակայն ունեն արտահանման խթանմանն ուղղված հատուկ ծրագրեր:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարելավել տեղական ՓՄՁ-ների միջազգային շուկաներում մրցակցելու կարողությունները՝ օգնելով նրանց ձեռք բերել վարկունակության վարկանիշեր, գտնել միջազգային գործընկերներ, տրամադրելով միջազգային շուկաների վերաբերյալ տեղեկատվություն, խթանելով ՀՈՒՄ-ը և կիրառելով միջազգային որակավորման ստանդարտներ:

Մեծացնել ընկերությունների տեղեկացվածությունն արտահանման՝ որպես աճի և շուկայի ընդլայնման հնարավորության վերաբերյալ:

Բարելավել արտահանման խթանման պետական և ոչ պետական նախաձեռնությունների միջև համաձայնեցումը՝ առավելագույն արդյունավետության հասնելու և ավելորդ կրկնությունների բացառման համար:

ԿՇՌՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 10՝ ՓՄՁ-ՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՑՆԱՑՈՒՄ



Նշում՝ ցուցանիշները դիտարկում են քաղաքականության բարեփոխումները 5 մակարդակների վրա, 1-ամենաթույլ, 5-ամենաուժեղ

ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ

Սկսած 2000 թ. Հայաստանի կառավարությունը նախաձեռնողական մոտեցում է ցուցաբերում ՓՄՁ աճի խթանմանը: Այս ընթացքում հիմնական զարգացումներն են եղել ՓՄՁ քաղաքականության իրականացման գործակալության հիմնումը, ՓՄՁ աջակցության խորհրդի ստեղծումը և ՓՄՁ նոր ռազմավարության մշակումը՝ սկսած 2012թ.: 2011թ. ՓՄՁ-ների պաշտոնական սահմանումները համապատասխանեցվեցին ԵՄ սահմանումներին:

Կարգավորումների պարզեցման մասնակցական նախաձեռնությունների շնորհիվ Հայաստանը առավելագույն միավորներն է վաստակել գործառնական միջավայրում:

Հայաստանում ՓՄՁ զարգացման ազգային գործակալության (արդյունավետ գործող կառույց Հայաստանի ամբողջ տարածքում բարձր ներկայացվածությամբ) կողմից ՓՄՁ-ների աջակցության համար կիրարկվում են մի շարք արդյունավետ գործիքներ, ներառյալ բիզնես ծառայություններ, վերապատրաստման և տեղեկատվական կենտրոններ: Հայաստանն ակտիվորեն աջակցում է տեղական ՓՄՁ-ներին՝ արտահանման և նորարարական կարողությունների ձևավորման հարցում:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշակել և հաստատել ՓՄՁ զարգացման ռազմավարությունը և շարունակել հանրային-մասնավոր երկխոսությունների վրա հիմնված բիզնես միջավայրի բարեփոխումները: Ռազմավարությունը պետք է ներառի ձեռներեցության ռազմավարական զարգացումը ուսումնառության համակարգում, շեշտադրի հմտությունների զարգացումը փոքր բիզնեսում և կանանց ձեռներեցության աջակցությունը:

Բարձրացնել հանրային-մասնավոր խորհրդատվությունների արդյունավետությունը՝ քաղաքականության մշակման քննարկումների մեջ ՓՄՁ ներկայացուցիչների ներգրավվածության մեծացման միջոցով:

Առաջնահերթություն սահմանել ՓՄՁ ֆինանսավորման, նորարարության և արտահանման խթանման ուղղություններով: Որպես օրինակ կարող է ծառայել ՓՄՁ քաղաքականության գործիքների սահմանումը, որոնք կհասցեագրեն տնտեսության առանցքային ճյուղերում (ագրոբիզնես, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ, զբոսաշրջություն և շինարարություն) ՓՄՁ-ի հատուկ կարիքները:

Հայաստանի ՓՄՁ ոլորտի հիմնական տվյալները (2009)

ՓՄՁ-ների մասնաբաժինը բիզնես ոլորտում՝ գրանցված ձեռնարկությունների 97.7%

ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ՝ 42.2%

ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ՝ 42.5%

Աղբյուր՝ ՓՄՁ ԶԱԿ (2010), Հայաստանում 2011թ. առաջ կիրառվող «փոքր և միջին ձեռնարկությունների»պաշտոնական սահմանման հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԲԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ



1 Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն
2 Մենակացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար
3 ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ
4 ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր
5ա ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ
5բ Պետական գնումներ
6 ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն
7 Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ
8ա Ձեռներեցության հմտություններ
8բ ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
9 ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ
10 ՓՄՁ-ների միջազգայնացում

ԱԴՐԲԵՋԱՆ

Սկսած 1999թ. Ադրբեջանը ճանաչել է փոքր ձեռնարկատիրության կարևորությունը և ՓՄՁ-ներին աջակցության կարիքը՝ բարեփոխումների և կարգավորումների պարզեցման միջոցով: Այդ ժամանակվանից ի վեր երկրում բիզնես միջավայրը մեծապես բարելավվել է, և Համաշխարհային բանկը 2009թ. երկիրն անվանել է տարածաշրջանի հիմնական ռեֆորմատոր, որը «Doing Business» 10 ցուցանիշներից 7-ում գրանցել է դրական տեղաշարժեր:

Ադրբեջանում չկա գործող ՓՄՁ զարգացման ռազմավարություն, սակայն ձեռներեցության աջակցման և հատուկ մեխանիզմները ներառված են առավել ընդհանրական մակարդակի ազգային ռազմավարությունների և դրանց գործողությունների ծրագրերի մեջ, որոնք վերաբերում են տարածաշրջանային զարգացմանը և աղքատության նվազմանը:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկատիրության զարգացման մեխանիզմների արդյունավետության բարձրացման նպատակով բարելավել ինստիտուցիոնալ դաշտը և քաղաքականության ներպետական համակարգումը: Առանցքային պետք է դառնա ՓՄՁ-ի հետ առնչվող նախարարությունների և գործակալությունների հորիզոնական համակարգումը՝ առկա նախաձեռնությունների միջև կապն ապահովելու և կրկնություններից խուսափելու նպատակով:

Աջակցություն ֆինանսավորման հասանելիության ապահովման համար վարկային տեղեկատվական համակարգի ընդգրկունության և արդյունավետության բարձրացման միջոցով: Գրավի կենտրոնական ռեգիստրի հիմնումը կնպաստի գրավի աղբյուրների բարելավմանը և ՓՄՁ-ների համար բանկային վարկավորման հասանելիության մեծացմանը:

Ձեռներեցներին և փոքր բիզնեսին տրամադրվող ուղղակի պետական աջակցություն՝ տնտեսության դիվերսիֆիկացմանն ուղղված նոր բիզնես գաղափարների և հնարավորությունների համար: Ձեռներեցության սահմանումը կարող է այնպես ձևակերպվել, որ ներառի առավել նեղ դասակարգումներ, որոնք, իրենց հերթին, կներկայացնեն յուրահատուկ բնութագրիչներով, կարիքներով և պահանջներով տարբեր չափերի ՓՄՁ-ներ:

Ադրբեջանը պետք է շարունակի շարունակական ձեռնարկատիրական կրթությանը նպատակաուղղված քաղաքականության նախաձեռնությունները՝ միաժամանակ շեշտադրելով փոքր բիզնեսում և կանանց ձեռներեցության մեջ հմտությունների զարգացումը:

Ադրբեջանի ՓՄՁ ոլորտի հիմնական տվյալները (2010)

ՓՄՁ-ների մասնաբաժինը բիզնես ոլորտում գործող ձեռնարկությունների 93.8%

ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ՝ 5.9%*

ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ՝ 1.7%*

*ՀՆԱ-ի և զբաղվածության տվյալները չեն ներառում անհատ ձեռներեցներին

Աղբյուր՝ Ադրբեջանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Ադրբեջանում «փոքր ձեռնարկությունների» պաշտոնական սահմանման հիման վրա:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՓԲԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ



1 Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն
2 Մենակացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար
3 ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ
4 ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր
5ա ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ
5բ Պետական գնումներ
6 ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն
7 Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ
8ա Ձեռներեցության հմտություններ
8բ ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
9 ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ
10 ՓՄՁ-ների միջազգայնացում

ԲԵԼԱՌՈՒՍ

Բելառուսի կառավարությունը խթանում է տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնակցությունը և մի շարք քայլեր է ձեռնարկում ՓՄՁ աջակցության համակողմանի քաղաքականության մշակման ուղղությամբ: Պետական աջակցության մեխանիզմները և 2011 թվականը՝ որպես Ձեռներեցության տարի հայտարարումը վկայեցին պետական քաղաքականության մեջ զգալի տեղաշարժերի մասին, որոնք ուղղված են առավել ստեղծագործ, նորարար և ձեռներեց հասարակության ձևավորմանը:

Բելառուսն իրականացնում է նորարարության ռազմավարություն, որը ներառում է մի շարք նորարարական և տեխնոլոգիական կենտրոնների կողմից ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցության ծառայություններ:

Տնտեսության ազատականացման դանդաղ տեմպը խոչընդոտում է ՓՄՁ-ի աճը: Չնայած Բելառուսի տնտեսությունը ԱԳ տարածաշրջանում երկրորդն է իր մեծությամբ, վերջինիս ՓՄՁ ոլորտը դեռևս գտնվում է զարգացման ցածր մակարդակի վրա:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բելառուսում մասնավոր ձեռներեցության համար նոր բիզնես հնարավորությունների ստեղծման նպատակով ապահովել ՓՄՁ ների գործունեության հավասար պայմաններ և ընդլայնել մասնավոր ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունները:

ՓՄՁ աջակցության համար ստեղծել ինստիտուցիոնալ դաշտ՝ օրինակ, ստեղծել ՓՄՁ քաղաքականության իրականացման համար հստակ մանդատով և անհրաժեշտ ֆինանսավորմամբ գործակալություն:

Նոր քաղաքականությունների և բիզնեսին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացում շարունակել բիզնես համայնքի ներառումը:

Կիրառել հատուկ միջոցներ ձեռներեցությունը որպես հիմնական ունակություն ձևավորելու ուղղությամբ, ներառյալ ձեռներեցության ներառումը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգում, ձեռնարկատիրական հմտությունների զարգացումը և կանանց ձեռներեցության խթանումը:

Բելառուսի ՓՄՁ ոլորտի հիմնական տվյալները (2010)

ՓՄՁ-ների մասնաբաժինը բիզնես ոլորտում՝ գործող ձեռնարկությունների 97.2%

ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ՝ 28.1%

ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ՝ 20%

Աղբյուր՝ Belstat, Բելառուսում «փոքր և միջին ձեռնարկությունների» պաշտոնական սահմանման հիման վրա:

ԲԵԼԱՌՈՒՍԻ ՓԲԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ



1 Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն
2 Մենակացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար
3 ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ
4 ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր
5ա ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ
5բ Պետական գնումներ
6 ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն
7 Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ
8ա Ձեռներեցության հմտություններ
8բ ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
9 ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ
10 ՓՄՁ-ների միջազգայնացում

ՎՐԱՍՏԱՆ

Վարչական կարգավորումների պարզեցման, հարկային բեռի թեթևացման, կոռուպցիայի դեմ պայքարի, ազատ առևտրի և մասնավորեցման խթանման և ազգային ձեռներեցության շարունակական կրթության հարթակ ստեղծելու համար քաղաքականության համագործակցություն նախաձեռնելու շնորհիվ Վրաստանը բարելավել է բիզնես միջավայրը բոլոր ձեռնարկությունների համար, այդ թվում ՓՄՁ-ների: Բարեփոխումների քաղաքականության ամենաարդյունավետ առանցքներից են համարվում հակակոռուպցիոն մեխանիզմները:

ՓԲԱ գնահատմամբ Վրաստանը բավականին բարձր դիրքերում է պատասխանատու վարչարարության և ֆինանսավորման հասանելիության ցուցանիշներով: Գործում են կանանց՝ առավել զարգացած ձեռներեցությանը նպաստող հիմնական քաղաքականությունները:

Առկա սահմանափակ տեղեկատվությունը վատթարացնում է Վրաստանի կատարողականը, մասնավորապես սկսնակ ընկերություններին հասցեագրման և ՓՄՁ-ների վերապատրաստման ցուցանիշներով:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓՄՁ-ների զարգացման հարցում առավել ռազմավարական մոտեցում որդեգրել և սահմանել հետագա զարգացման համար ռազմավարական ուղղությունները և նպատակները՝ հաշվի առնելով տնտեսության կարևոր ճյուղերում (ագրոբիզնես, թեթև արդյունաբերություն, զբոսաշրջություն) ՓՄՁ-ների կարիքները:

ՓՄՁ ոլորտում իրավական փոփոխությունների դրական կամ բացասական հետևանքներն արձանագրելու համար պարբերաբար իրականացնել Կարգավորման ազդեցության գնահատում: Թե պետական կառույցները, թե մասնավոր հատվածն օգուտ կքաղեն հանրային-մասնավոր համագործակցության մեծացումից:

Տրամադրել տեղեկատվություն ՓՄՁ-ների համար արտասահմանյան շուկաներ մուտքի պահանջների և արտահանման հնարավորությունների վերաբերյալ և քաղաքականության ակտիվ գործիքների միջոցով խորհրդատվական ծառայությունների և նորարարության խթանման մեխանիզմներ առաջարկել ՓՄՁ-ներին: Վերապատրաստման ծառայություններ տրամադրողների համար ստեղծել որակի ազգային ենթակառուցվածք, որը կնպաստի վրացական ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը:

Շարունակել ձեռներեցության շարունակական կրթության խթանումը՝ հիմնվելով կրթության որակի բարելավման և ձեռնարկատիրական մշակույթի ներդրման բնագավառում արդեն իսկ գրանցված առաջընթացի վրա: Վերապատրաստման ծառայությունների շուկայի արդյունավետությունը բարձրացնելու համար ստեղծել փոքր բիզնեսի հմտությունների պարբերական գնահատման համակարգ:

Վրաստանի ՓՄՁ ոլորտի հիմնական տվյալները (2010)

ՓՄՁ-ների մասնաբաժինը բիզնես ոլորտում գործող ձեռնարկությունների 96%

ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ՝ 43.6%

ՓՄՁ-ների մասնաբաժինը ավելացված արժեքի մեջ՝ 19.3%

Աղբյուր՝ GeoStat, "փոքր և միջին ձեռնարկությունների" պաշտոնական սահմանման հիման վրա:

ՎՐԱՍՏԱՆԻ ՓԲԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ



1 Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն
2 Մնանկացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար
3 ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ
4 ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր
5ա ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ
5բ Պետական գնումներ
6 ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն
7 Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ
8ա Ձեռներեցության հմտություններ
8բ ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
9 ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ
10 ՓՄՁ-ների միջազգայնացում

ՄՈԼԴՈՎԱ

Մոլդովայի ՓՄՁ քաղաքականությունը զգալի բարելավում է արձանագրել ընկերությունների գրանցման գործընթացներում և էլեկտրոնային կառավարման համակարգում: Կարգավորման դաշտը պարզեցվել է մի քանի փուլով ընթացած օրենսդրական գիլյոտինի արդյունքում, որի նպատակն էր կրճատել հին կամ ոչ անհրաժեշտ իրավական կարգավորումները:

ՓՄՁ զարգացման նոր 2012-2020թթ. ռազմավարության մշակումը ներկայումս ավարտին է հասցվում: Նոր ռազմավարությունը ներառում է ձեռներեցության կրթության շահառուներին, չնայած հաջողված փորձի փոխանակումը սահմանափակված է կրթական ցանցերի ցածր զարգացվածությամբ և տեղեկատվական աղբյուրների ցածր հասանելիությամբ:

Չնայած կարգավորման դաշտի բարեփոխումներն ընթացքում են, այնուամենայնիվ բիզնեսի առկա խնդիրների հասցեագրումը դեռևս կարևոր խնդիր է: Բիզնես աջակցության և տեղեկատվության տրամադրման ծառայությունները հատվածային են, իսկ խորհրդատվության կամ բիզնես պլանավորման ծառայությունների հասանելիությունը ՓՄՁ-ների համար սահմանափակ են:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մրցունակ կրթության և վերապատրաստման մեխանիզմների շնորհիվ ստեղծել լայնածավալ ձեռնարկատիրական մշակույթ, որը նպատակաուղղված կլինի երկարաժամկետ հատվածում ՓՄՁ քաղաքականությունների հաջող իրականացման և պետության, կրթական համակարգի և մասնավոր ոլորտի միջև ներկա համագործակցության պահպանմանը:

Ապահովել թափանցիկություն, կորպորատիվ կառավարում, մրցակցություն և մեծացնել բանկային ոլորտում կատարելագործվածության աստիճանը: Այս ամենը զուգորդել մակրոտնտեսական կայունության ապահովմամբ՝ որպես ՓՄՁ-ների կայուն ֆինանսավորման երաշխիք:

Նպատակադրել արտահանման կարողություններ ունեցող ՓՄՁ-ներին՝ վերջիններիս տրամադրելով տեղեկատվական ծառայություններ, բիզնես կապեր և առաջխաղացման ռեսուրսներ:

Մոլդովայի ՓՄՁ ոլորտի հիմնական տվյալները (2010)

ՓՄՁ-ների մասնաբաժինը բիզնես ոլորտում գործող ձեռնարկությունների 97.7%

ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ՝ 58.8%

ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ՝ 28.3%

Աղբյուր՝ Մոլդովայի Վիճակագրության ազգային բյուրո, Մոլդովայում «փոքր և միջին ձեռնարկությունների» պաշտոնական սահմանման հիման վրա:

ՄՈԼԴՈՎԱՑԻ ՓՐԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ



1 Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն
2 Մենակացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար
3 ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ
4 ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր
5ա ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ
5բ Պետական գնումներ
6 ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն
7 Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ
8ա Ձեռներեցության հմտություններ
8բ ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
9 ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ
10 ՓՄՁ-ների միջազգայնացում

ՈՒԿՐԱԻՆԱ

Ուկրաինայում ՓՄՁ քաղաքականության ինստիտուցիոնալ դաշտը ներկայումս վերակազմակերպման փուլում է. ՓՄՁ քաղաքականության իրականացման պատասխանատվությունը փոխանցվում է նոր գործակալության:

ՓՄՁ զարգացմանն ուղղված նախաձեռնությունների արդյունքում Ուկրաինայում որոշ չափով իրականացվել են կարգավորումների կրճատումներ և վարչական գործընթացների պարզեցումներ: Այնուամենայնիվ, ընդհանուր բիզնես միջավայրը խոչընդոտում է մասնավոր ոլորտի և ՓՄՁ-ների աճին, և չի գործում ՓՄՁ քաղաքականության մշակման համապարփակ մոտեցում:

Ուկրաինան զգալի առաջընթաց է գրանցել միջնակարգ կրթության համակարգում ձեռներեցությունը խթանելու և վերապատրաստման և ձեռներեցության հմտությունների բնագավառում որակի վերահսկման հարցում:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդունել ՓՄՁ զարգացման կենսունակ ռազմավարություն, ներառյալ առավել բարենպաստ իրավական դաշտի ստեղծում:

Բարձրացնել հանրային-մասնավոր խորհրդատվությունների արդյունավետությունը՝ մեծացնելով մասնավոր հատվածի և հատկապես ՓՄՁ-ների ներգրավվածությունը կարգավորման ոլորտին վերաբերող որոշումների մեջ:

Կրթական ծրագրերի բարեփոխումների, ուսուցիչների վերապատրաստման նորարարական մոտեցումների և բիզնեսի հետ համագործակցության նոր ձևաչափերի միջոցով շարունակել ձեռներեցական հմտությունների զարգացումը:

Կոնսոլիդացնել նորարարական քաղաքականության դաշտը՝ վարից վեր նախաձեռնությունների խթանման և հետազոտությունների արդյունքների ու դրանց շուկայական կիրառությունների միջև կապն ուժեղացնելու նպատակով:

Ուկրաինայի ՓՄՁ ոլորտի հիմնական տվյալները (2010)*

ՓՄՁ-ների մասնաբաժինը բիզնես ոլորտում գործող ձեռնարկությունների 99.4%

ՓՄՁ-ների մասնաբաժինը զբաղվածության մեջ՝ 58.1%

ՓՄՁ-ների մասնաբաժինը շրջանառության մեջ՝ 51.2%

*Անհատ ձեռներեցները ներառված չեն ՓՄՁ ոլորտի սահմանման մեջ

Աղբյուր՝ Ukrstat, Ուկրաինայում «փոքր և միջին ձեռնարկությունների» պաշտոնական սահմանման հիման վրա:

ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՓԲԱ ՄԻԱՎՈՐՆԵՐ



1 Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն
2 Մնանկացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար
3 ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ
4 ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր
5ա ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ
5բ Պետական գնումներ
6 ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն
7 Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ
8ա Ձեռներեցության հմտություններ
8բ ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
9 ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ
10 ՓՄՁ-ների միջազգայնացում

Աջակիցներ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՏՀԶԿ), ԵՎՐԱՍԻԱ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Մեկնարկելով 2008թ.՝ ՏՀԶԿ Եվրասիա զարգացման ծրագիրը նպաստում է տնտեսական բարեփոխումների իրականացմանն ու գործարար միջավայրի բարելավմանը՝ ապահովելու կայուն տնտեսական աճ և զբաղվածություն Կենտրոնական Ասիայի (Աֆղանստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոնղոլիա, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան) և Արևելյան Եվրոպայի ու Հարավկովկասյան տարածաշրջաններում (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա)

www.oecd.org/daf/psd/eurasia

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Եվրոպական հանձնաժողովի ձեռնարկությունների և արդյունաբերության հարցերով գլխավոր տնօրինության աշխատանքն ուղղված է ապահովելու ԵՄ քաղաքականության աջակցությունը ԵՄ ձեռնարկությունների կայուն մրցունակությանը, ինչպես նաև նպաստելու աշխատատեղերի ստեղծմանն ու կայուն տնտեսական աճի ապահովմանը: Այն հիմնարար դերակատարություն ունի աճի և աշխատատեղերի Եվրոպա 2020 ռազմավարության իրականացման գործում:

www.ec.europa.eu/enterprise

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եվրոպական կրթական հիմնադրամը (ԵԿՀ), ԵՄ արտաքին կապերի քաղաքականության համատեքստում, օգնում է անցումային և զարգացող երկրներին՝ օգտագործելու իրենց մարդկային կապիտալի ներուժը կրթական, ուսուցման և աշխատաշուկայի համակարգերի բարեփոխումների միջոցով:

www.etf.europa.eu

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ

ՎԶԵԲ-ը միջազգային ֆինանսական հաստատություն է, որն աջակցում է Կենտրոնական Եվրոպայից մինչ Կենտրոնական Ասիայում իրականացվող ծրագրերին: Ներդրումներ կատարելով գլխավորապես մասնավոր հատվածի ընկերություններում, որոնց պահանջները չեն կարող ամբողջապես բավարարվել շուկայի կողմից՝ Բանկը նպաստում է անցմանը դեպի առավել բաց և ժողովրդավարական շուկայական տնտեսության:

www.ebrd.com

Բոլոր լուսանկարները © Thinkstock

Կոնտակտային տվյալներ

Պրն. Անտոնիո Սոմմա
Ծրագրի ղեկավարի
պաշտոնակատար
antonio.somma@oecd.org

Մամուլի պատասխանատու
Տկն. Վանեսսա Վալի
Հաղորդակցման գծով ղեկավար
vanessa.vallee@oecd.org

Եվրոպական միության
ֆինանսական աջակցությամբ